

# Երեսփոխան

## ՄԱՅՐ ԱՌՈՒ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱՆԻ ԿՐՈՆԱԿԱՆ, ՄԵԱԿՈՒԹԱՅԻՆ, ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՐԿԵԱԲԱԹԱԹԵՐՈ

### ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎԵՂԱՐԱՆՈՒՄ

#### Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց

28 ապրիլի

#### Լիբանանի ուղանավորման հարցերով նախարարին



Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Տայրազուկ Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց ՀՀ պաշտոնական այցով Հայաստան ժամանած Լիբանանի Հանրապետության պալեստինական հարցերով պետական նախարար Մայքլ Ֆարաունիս՝ ուղեկցությամբ ՀՀ տնտեսական զարգացման եւ ներդրումների նախարար Սուրեն Կարալանի:

Զրույցի ընթացքում Նորին Սրբությունը ողջունեց երկու ժողովուրդների բարեկամական կապերի զորացմանն ուղղված քայլերն ու համատեղ իրականացվող ծրագրերը: Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր խոսքում նաեւ երախտագիտություն հայտնեց Լիբանանի ժողովրդին եւ իշխանություններին, ովքեր մեկ դար առաջ ապաստան են տվել Հայոց ցեղասպանությունը վերապրածներին եւ այսօր էլ սեր եւ հոգատար վերաբերմունք են դրսևորում հայ համայնքի նկատմամբ՝ հնարավորություն ընձեռելով ապրել ազգային-եկեղեցական լիարժեք կյանքով:

Նախարար Ֆարաունիս իր հերթին ուրախություն հայտնեց Մայր Աթոռ Ս. Էջմիածին այցելելու առիթով՝ ընդգծելով, որ քաջ ծանոթ է հայ ժողովրդի պատմությանը, կրած տառապանքներին եւ Լիբանանի եղբայրներին:

Իր հետ կիսում է հայ ժողովրդի զգացումները: Նախարարը նաեւ կարեւորեց Լիբանանահայ համայնքի դերակատարությունը տարբեր բնագավառներում: Պրն Ֆարաունիս խոսքով՝ Լիբանանում քրիստոնյաներն ու մահմեդականներն ապրում են համերաշխ, եւ չնայած երբեմն առկա զանազան մարտահրավերներ վտանգում են խաղաղ կյանքը, Լիբանանը կրոնական հանդուրժողականության, համերաշխության վրա հիմնված երկիր է:

Զրույցի ընթացքում անդրադարձ կատարվեց նաեւ Մերձավոր Արեւելքի ծանր իրավիճակին, տարբեր ժողովուրդների, հատկապես քրիստոնյա համայնքների դիմագրաված դժվարություններին: Իր մտախոցությունն արտահայտելով այս կապակցությամբ՝ Վեհափառ Հայրապետը նշեց. «Մենք մեր աղոթքն ենք բարձրացնում առ Աստված, որ Տերը խաղաղություն բերի Մերձավոր Արեւելքի երկրներին: Մեր աղոթքն ենք բերում նաեւ Ձեզ, Լիբանանի աստվածասեր ժողովրդին՝ հայցելով Տիրոջ զորակցությունն ու առատ շնորհները»:

Հանդիպմանը ներկա էր Մայր Աթոռի վարչաճեմական թափն սօսեմ Մուսել եղբայրը:

#### Իտալիայի Կասեղանի թեմի 30 Բահանայի



Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Կաթողիկ եկեղեցու՝ Իտալիայի Կասեղանի

թեմի երեսուն Բահանայի՝ Ռոմանո եպիսկոպոսի գլխավորությամբ:

Հանդիպման սկզբում Կասեղանի եպիսկոպոսը Ամենայն Հայոց Կաթողիկոսին տեղեկացրեց, որ ամեն տարի թեմի եկեղեցականներն ուխտագնացության են մեկնում ուրեւ երկիր՝ ծանոթանալու տվյալ երկրի հոգեւոր-մշակութային ժառանգությանը: Այս տարի ընտրվել է Հայաստանը: Ռոմանո եպիսկոպոսը Նորին Սրբությանը ներկայացրեց խմբի տպավորությունները:

Այնուհետեւ Կաթողիկ եկեղեցականներին ողջունեց Ամենայն Հայոց Հայրապետը՝ գովաբանությամբ անդրադարձնելով երկու եկեղեցիների միջեւ առկա ջերմ, եղբայրական հարաբերություններին: Գարեգին Բ Վեհափառը իրերեքին ներկայացրեց Հայոց ցեղասպանության հետեւանքով ու խորհրդային տարիներին Հայաստանայց Առաքելական Ս. Եկեղեցուն հասցված ավերների հաղթահարմանն ուղղված ջանքերը եւ ներկայիս գործունեությունը տարբեր ոլորտներում:

#### Քաղցկեղի վերահսկման միջազգային միության նախագահին

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Քաղցկեղի վերահսկման միջազգային միության Նորին Նախագահի, Հորդանանի արքայադուստր Դինա Մայրեդին՝ Միսրիայի Յերուսալեմի անվան Երեսմի պետական բժշկական համալսարանի ղեկավար Արմեն Մուրադյանին ուղեկցությամբ:

Հանդիպմանն Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր գնահատանքը բերեց Քաղցկեղի վերահսկման միջազգային միության Նորին Նախագահին՝ Հայաստան այցի եւ Երեսմի կոնգրեսին բերած մասնակցության առիթով: Գարեգին Բ Կաթողիկոսն ընդգծեց, որ մարդկանց կյանքը փրկելու եւ քաղցկեղով տառապող հիվանդներին հույս ներշնչելու աստվածահաճո առաքելությանն է ձված Հորդանանի արքայադուստրը:

Վեհափառ Հայրապետը մեծապես կարեւորեց Հայաստանում ուռուցքաբանության զարգացմանն ուղղված քայլերը, որոնք կնպաստեն քաղցկեղի կանխարգելմանը եւ բուժմանը, խոսեց բնակչության իրազեկվածության, ինչպես նաեւ առողջապահության մակարդակի բարձրացման անհրաժեշտության մասին: Այս կապակցությամբ Հայոց Հովվապետը տիկին Դինա Մայրեդին ներկայացրեց առողջապահության ոլորտում Մայր Աթոռի կողմից ձեռնարկվող քայլերը՝ հավելելով, որ եկեղեցին մշտապես իր հավատացյալներին հորդորում է աջակցել առողջական խնդիրներ ունեցող մարդկանց, դրսևորած սրտանցությամբ թթեւացնել նրանց ցավն ու տառապանքը:

Նորին Սրբությունը պատասխանեց նաեւ Կաթողիկ հոգեւորականների հարցերին, որոնք վերաբերում էին միջեկեղեցական հարաբերություններին, Հայոց եկեղեցու քարոզչական գործունեությանը, հովվական կյանքին, հոգեւորականների պատրաստության խնդրին եւ երիտասարդության քրիստոնեական դաստիարակությանը:

Հանդիպման վերջում Նորին Սրբությունը Պապական աղոթքով իր օրհնությունը բերեց ներկայներին՝ մաղթելով նրանց արգասավոր գործունեություն եւ Աստծու ամենագոր Աջի պաշտպանություն՝ իրենց սրբազան առաքելության մեջ:

Հանդիպմանը ներկա էին Մայր Աթոռ Ս. Էջմիածնի վարչատնտեսական բաժնի տնօրեն Մուշեղ եպիսկոպոս Բաբայանը եւ միջեկեղեցական հարաբերությունների բաժնի պատասխանատու Շահե Շ. վրդ. Անանյանը:



Քաղցկեղի վերահսկման միջազգային միության Նախագահը եւս անդրադարձ կատարեց քաղցկեղի դեմ պայքարի շրջանակներում միության կողմից իրականացվող ծրագրերին, ներկայացրեց Հայաստան այցի իր տպավորությունները: Քաղցկեղի կանխարգելման եւ հիվանդների խնամատարության գործում արքայադուստր Դինան նաեւ կարեւորեց կրոնական հաստատությունների եւ առաքելությունների դերը:

Զրույցի ընթացքում Ամենայն Հայոց Կաթողիկոսը վերհիշեց 2000 թ. հովվապետական իր այցը Հորդանանի Հաշիմյան Թագավորություն: Խոսեց Հորդանանի հայ համայնքի, ինչպես նաեւ երկրում տարբեր ազգային եւ կրոնական համայնքների ջերմ փոխհարաբերությունների ու խաղաղ համակեցության մասին:

Հանդիպման վերջում Նորին Սրբությունն իր օրհնությունը բերեց տիկ. Դինա Մայրեդին եւ մաղթեց Բարձրալի զորակցությունը նրա օգտաշատ առաքելության մեջ:

Հանդիպմանը ներկա էր Մայր Աթոռ Ս. Էջմիածնի վարչատնտեսական բաժնի տնօրեն Մուշեղ եպիսկոպոս Բաբայանը:

Շարունակությունը՝ էջ 2

## Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց

Սկզբը՝ էջ 1

30 ապրիլի

### ԴՐՇՄ-ի նախագահին

Ն. Ս. Օ. Ս. Գարեգին Բ Շայրազույն Պատրիարքը եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում ընդունեց Հայկական բարեգործական ընդհանուր միության նախագահ տիար Պերճ Սեդրակյանին:

Հանդիպմանը Վեհափառ Հայրապետը եւ ԴՐՇՄ-ի նախագահը գոհունակությամբ անդրադարձան Մայր Աթոռ Ս. Էջմիածնի եւ ԴՐՇՄ-ի արդյունաշատ համագործակցությանը եւ քննարկելով համատեղ իրականացվող կրթական եւ սոցիալական ծրագրերի ընթացքը՝ նախանշեցին ապագա անելիքները:

Նորին Սրբությունը եւ տիար Պերճ Սեդրակյանը մասնավորապես կարեւորեցին երիտասարդների հայեցի ու քրիստոնեական դաստիարակությանը, ինչպես նաեւ՝ հոգեւորականների նոր սերնդի կրթությանն ուղղված ծրագրերը:

ԴՐՇՄ-ի նախագահը Վեհափառ Հայրապետին ներկայացրեց միության կողմից Հայաստանում, Արցախում ու Սփյուռքի տարբեր համայնքներում կատարվող աշխատանքները:

Ամենայն Հայոց Կաթողիկոսն այս կապակցությամբ իր գնահատանքը փոխանցեց Հայկական բարեգործական ընդհանուր միությանը՝ նրա ազգօգուտ եւ հայրենակներ գործունեությանն ու Հայոց եկեղեցու առաքելությանը ցուցաբերվող զորակցության համար:

Զրույցի ընթացքում խոր մտախոնջություն հայտնվեց Մեծավոր Արեւելի երկրներում տիրող իրավիճակի հետեւանքով հայկական համայնքների արտագաղթի առնչությամբ, հատկապես խոսվեց Սիրիայի հայ համայնքին եւ Հայաստանում հաստատված սիրիահայ ընտանիքներին Մայր Աթոռի եւ ԴՐՇՄ-ի կողմից ցուցաբերվող օժանդակությանն ու այս ուղղությամբ ծրագրվող հետագա քայլերի մասին: Այս կապակցությամբ ընդգծվեց, որ սիրիահայությանը ցույց տրվող գորակցությունը Հայրենական եւ լինելու, նաեւ կարեւորվեց պետական, հասարակական եւ ազգային բարեսիրական բոլոր կառույցների ուժերի մեկտեղումն ու համակարգված աշխատանքը:

Գարեգին Բ Հայրապետին ու տիար Պերճ Սեդրակյանն անդրադարձան ազգային-եկեղեցական կյանքին եւ հայրապաշտպանությանն առնչվող այլ հարցերի:

Հանդիպման ավարտին ԴՐՇՄ-ի նախագահն տիար Պերճ Սեդրակյանը Մայր տաճարում ներկա գտնվեց սբ Պատարագին:

## Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում նշվեց Երկրապալաի օրը



Մայիսի 8-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում նշվեց Երկրապալաի օրը: Այս առիթով Մայր տաճարում, հանդիսապետությամբ Ն. Ս. Օ. Ս. Գարեգին Բ Շայրազույն Պատրիարքը եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, մատուցվեց Պատարագին եւ Մայր Աթոռի դիվանապետ Արշակ եպս հաջատրյանը:

Սրբազան արարողությանը ներկա էին Երկրապալա կամավորականների միության (ԵԿՄ) նախագահ, գեներալ-լեյտենանտ Մանվել Գրիգորյանը, ՀՀ արտակարգ իրավիճակների նախարար Դավիթ Տոնոյանը, Էջմիածնի քաղաքապետ Կարեն Գրիգորյանը, ՀՀ Ազգային ժողովի պատգամավորներ, ԵԿՄ վարչության անդամներ, մարզային խորհուրդների եւ տարածքային բաժանմունքների ներկայացուցիչներ, երիտասարդ եւ պատանի երկրապալաներ:

Պատարագին Արշակ եպիսկոպոսը, խոսելով օրվա խորհրդի նշանակության մասին, անդրադարձավ քրիստոնեական սիրո գաղափարին եւ հատկապես առ հայրենին ունեցած սիրուն: Սրբազան հայրը մասնավորապես ասաց. «...Մերը եղավ դարեր Հայրենակ մեր քաջամարտիկների Հարժիչ ուժը՝ հայրենիքի նկատմամբ իրենց զգացումներն արտահայտելու ճանապարհին՝ Ավա-



րայից մինչեւ Սարդարապատ, Սարդարապատից մինչեւ Հայրենական մեծ պատերազմ, Հայրենական մեծ պատերազմից մինչեւ Արցախյան

հերոսամարտ: Մերը եւ միայն մերը եղավ Հարժիչ ուժը՝ հայրենասեր մեր զավակների: Այս սիրով, այս գոհողության սիրով, հայրենիքի նկատմամբ անվաճողորդ եւ անսակարկ սիրով Երկրապալա կամավորական միության մեր քաջարի զավակները մեկնեցին սահման՝ պատերազմի սարսափների ու պատերազմի մեջ զրկակներ կրող մեր հայրորդիների կյանքը փրկելու եւ մեր սահմանները պաշտպանելու»:

Պատարագից սրբազանը ցավով ընդգծեց, որ այս պատերազմն այսօր եւս Հայրենակում է, եւ տակավին չի ավարտվել հայրենիքը պահպանող զինվորի եւ երկրապալաի առաքելությունը: «Հայրենիք ասվածը մի դատարկ հասկացություն չէ: Հայրենիքը պարզապես մի բնական վայր չէ, ուր մենք ապրում ենք, հայրենիքը մի կորպորացիա չէ, ուր աշխատում ենք հանապազօրյա հացը հայթայթելու համար: Հայրենիքը մի կենսատարածք է, որը նախապայման է եւ երաշխիք մեր լինելության եւ ինքնության: Հայրենիքը մեր ծնողն է, մեր մայրն է, մեր երեխան եւ մեր զավակը: Այն ամբողջությունը, որին մենք սովոր ենք կոչել սրբություն: Հայրենիքը մեր հավատքն է:



## Ամենայն Հայոց Կաթողիկոսի շնորհավորագիրը Ֆրանսիայի նորընտիր նախագահին

Մայիսի 10-ին Ն. Ս. Օ. Ս. Գարեգին Բ Շայրազույն Պատրիարքը եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը շնորհավորական գիր է հղել Ֆրանսիայի Հանրապետության նորընտիր նախագահ Էմանուել Մակրոնին:

«Ֆրանսիան եղել է Հայրենակում եւ լինել Եվրոպական ընտանիքի հզոր ու առաջատար պետություններից մեկը, որ այսօր կարեւոր ավանդ է բերում աշխարհում համամարդկային արժեքների տարածման ու խաղաղության հաստատման գործում: Ֆրանսիայի ժողովուրդն առաջիկա տարիներին պետությունը ղեկավարելու պատասխանատու առաքելությունը վստահեց Ձեզ՝ հավատարմով Ձեր կարողություններին, դավանած արժեքներին ու փորձառությանը:

Մենք վստահ ենք, որ Ձեր նախագահության շրջանում պիտի Հայրենակին խորանալ փոխադարձությունները Հայաստանի եւ Ֆրանսիայի միջեւ, որոնց համար ամուր հենք են մեր ժողովուրդների դարավոր բարեկամությունն ու Ֆրանսիայում ապրող եւ ստեղծագործող հայ համայնքի ակտիվ ներգրավվածությունը երկրի հասարակական, քաղաքական ու մշակութային կյանքում»,- նշված է Վեհափառ Հայրապետի շնորհավորագրում:



Ամենայն Հայոց Գարեգին Բ Կաթողիկոսը մաղթել է, որ Բարձրյալն Աստված գորակից լինի նորընտիր նախագահին եւ պարգևի արդյունավոր գործունեություն՝ ի բարօրություն Ֆրանսիայի բարեկամ երկրի:

## Ամենայն Հայոց Կաթողիկոսի ցավակցագիրն Իրանի նախագահին

Մայիսի 5-ին Ն. Ս. Օ. Ս. Գարեգին Բ Շայրազույն Պատրիարքը եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը ցավակցական նամակ է հղել Իրանի Իսլամական Հանրապետության նախագահ Հասան Ռոհանիին՝ Իրանի Գոլեստան կամավորական հանքավայրի փլուզման կապակցությամբ, ինչը պատճառ է դարձել մարդկային բազում զոհերի:

Նորին Սրբությունն իր վշտակցությունն է հայտնել Իրանի նախագահին, զոհերի ընտանիքներին ու հարազատներին եւ Իրանի բարեկամ ժողովուրդին, առողջություն ցանկացել փրավորներին:

Ամենայն Հայոց Հայրապետը մաղթել է, որ Իրանի ժողովուրդը հաղթահարի արեւտի պատճառած վնասները եւ Հայրենակի իր խաղաղ կյանքն ու ստեղծագործ աշխատանքը:



# ՃՐԱԳԵ

Ս. Ճճճճճճ ճրագալույցն էր: Եկեղեցուց դուրս ցուրտ էր, սարսափեցնող սառնամանիք, բայց հաճելի ու ակնապարար, առատ ծյուն, այնքան առատ, որ երբեմն քվում էր, թե բնությունը ծածկող ճեղքակալությունը աներեւույթ մի բոլոր էր. որքան սպիտակ, նույնքան ունայնաշունչ, ուր, սակայն, կուրության սատիճանի խողովակներում էր աչքերը: Եկեղեցու բակում հավաքված մարդիկ խուռնորան շտապում էին. հակառակ ցրտին ու ծյան առատությանը՝ մրանք իրենց ձեռքերում պահել էին ամուր փակված ու քամուց պաշտպանող հատուկ թիթեղներով զարդարված ճրագները:

Եվ ահա շուտով, Ս. Ճճճճճճ՝ էլեկտրականության պես տարածվող միստիկ լարումի հուզականությանը, Ս. Պատարագի ավարտին պատրաստվեցին ճրագները, եւ հավատացյալներն ասես քարացած, բայց ներքին արվավածությամբ միաձուլված, միակերտված մղուձուլ ուղղվեցին դեպի Ս. Խորանից իջնող թափորը: Վերջինս համըստվող շարժվում էր դեպի եկեղեցու դուռը՝ հանդարտ ու վստահ մի շարժումով վառելով հոգեւոր ուրախության ալիքով ալեկոծված եւ խանդավառված հավատացյալների ճրագները:



Դրանով ավելի էր սաստկացել ցուրտը, եւ արդեն ծյան սպիտակությունն ու մթան սեւությունը յուրահատուկ մթնաղի ստվերապար էին ստեղծել: Կարծես մարդ մի աչքով անհրաժեշտաբար փնտրում էր գիշերվա ստվերները, մյուսով՝ հայուն ծյան ճեղքակալական մեղմությանը: Թափորի վերջից գնացող մոմին մոտեցավ երիտասարդ մի աղջիկ ու քիչ վախվորած, ասես փնտրելով, վառեց իր մեղմ, առանց թիթեղյա պաշտպանիչ ամանի ճրագը եւ համեստաբար մի կողմ քաշվեց: Հավատացյալների հոծ շարքերի մեջ նա ասես գիտակցաբար ծուլվեց, անեցավ ծյան ու մութի հակադրությունից ծնված մթնաղի: Երբ կրկին փորձեցի գտնել նրան ամբոխի մեջ, տեսա, որ նրա ճրագը հանգել էր, բայց նա շարունակում էր ձեռքերով փակել Ս. Ճճճճճճ ճրագալույցից առնված իր կրակը՝ ասես աներեւույթ ինչ-որ բանից պաշտպանելով այն: Ձաքմացա. ինչո՞ւ կրկին չի վառում այն, ինչո՞ւ է քամուց պաշտպանում արդեն հանգած ճրագը... Մի քանի վայրկյան ուշադիր նայելուց եւ մտածելուց հետո, բաժնորին համերթ, ես էլ առաջ շարժվեցի: Եվ միայն 10-15 րոպե անց, երբ արդեն վերադառնում էի, նկատեցի նրան՝ դարձյալ երկու ձեռքով ճրագն ամուր բռնած ու ջանադրաբար քանուկ պաշտպանելով: Արդեն կամեմուն էի մոտենալ, ասել, որ ճրագը վաղուց հանգել է, երբ հանկարծ մեկը մոտեցավ նրան, թեանցուկ արեց՝ նրա քայլերն ուղղորդելով դեպի եկեղեցի: Աղջիկը կո՛չր էր... Հանգած ճրագը շարունակում էր ամփոփված մնալ նրա փոքրիկ ու թերես արդեն սառած ձեռքերի մեջ:

# ՈՒՐԱՅՈՒՄ

Սեւանում այդ տարի ծնունդ չափազանց չոր էր ու դաժան: Չնայած ծյան առատությանը՝ Գեղամա ծովակից փչող քամին ցաքուցորդ էր անում ծյան զարմանալիորեն մեծացող շերտերն ու բացում սառած եւ ամուլ դարձած հողի ամոթալի մերկությունը: Երբեմն-երբեմն արեւի շողերը ծիկրակում էին սառցե երկնականարում, բայց նրանց ներկայությունն էլ ասես հայելացած երկնքում արտաքին մի պատկեր էր՝ առանց ջերմության ու կենդանության:

Ս. Առաքելոց եկեղեցու դիմաց սառցակալած լճին իր անթաքթ հայացքն էր գամել Սեւանականի վանահայր Եզնիկ վարդապետը: Մտքերն ու մտածումները, խորհուրդային ամաստվածության հետեւանքով ամայացած վանքերի պատերից կախված սարդոստայնների պես, հազարամեղուկ մի խճճում էին հյուսել նրա գլխում: Դեռ մի քանի օր առաջ, հանում վանքում մնացած մի քանի եղբայրների փրկության, նա ստիպված ստորադրել էր վանքի ունեցվածքի եւ ձեռագրերի բռնագրավման փաստաթղթի տակ... իր աշխարհիկ անունով՝ Սկրտիչ Կարապետյան, կամ ինչպես բուլշեւիկներն էին ասում ընկեր Սկո: Եվ հիմա նրան քվում էր, թե ամենուրեք նրան իբրեւ ուրացողի էին ընկալում: Վանքի փոս ընկած ու հարյուրամյակներ կյանած աստիճանները հրաժարվում էին նրա հոգնած ոտքերն իրենց վրա ընդունելուց, պահեցի ու աղոթեց խոնջացած ճգնաժամի աչքեր ինչեցնող վանքի քարերը հանդիմանությամբ էին հետեւում ընկճված վարդապետին: Իսկ քամին, անգութ ու աներես այդ քամին մտնում էր կապայի փեշի տակ, խառնում ականջներն ու դեմքը՝ անսրտաբար արտաբերելով՝ ո՛ւ... ո՛ւ... ուրախո՞ղ...

Փառաշեղ մորուքով կարծես զամվել էր իր ծնկն, ու լճի սառցե մակերեսին գլորվում էին նրա անպատասխան հարցերը: «Աստված չկա, կրոնն օպիում է ազգի համար...», դեռ մի քանի օր առաջ արդարացած բացակայելու էին կուրծքերը դուրս ցցած, կաշվաբանկոններով կարճիկ մարդիկ:

Ինքն ինչպե՞ս անձնատուր եղավ, ինչո՞ւ հրաժարվեց ընդունելու մահը՝ թեկուզ ի գին մնացած եղբայրների կյանքի: Չէ՞ որ այդ է յուրաքանչյուր հավատացյալ քրիստոնյայի, առավել եւս վարդապետի հավատարմությունը Սեւանականի Մայր Խորանի վրա բազմած խոշոր, արտահայտիչ աչքերով մանուկ Հիսուսի հանդեպ:

Վարդապետը դանդաղ ու երեւոլն քայլերով իջավ Ս. Առաքելոց եկեղեցուց, պատեց կղզում: Ինչքան գեղեցիկ է Տիրոջ արարչությունը: Մի բուռ ծյուն առավ, տարավ շուրթերին ու հիշեց սաղմոսերգուի խոսքերը. «Տողես զիս մշտկաւ եւ սուրբ եղէց, լուս եւ քան զծին սպիտակ եղէց...»: Որքան սարսափեցնող էին այդ տողերը, մանավանդ հիմա, երբ հավատարմության եւ դավաճանության տուների բախման ամասելի աղմուկը գրեթե մթագնում էր վանահոր միտքը: Բայց ահա քիչ անդին ծյունը կոխկրկնված ու տրորված, ցեխագույն էր դարձել. հավանաբար ե-

Սկրտիչ ու այլեւս չի կատարում Տիրոջ կամքը...

Հաջորդ առավոտյան կղզին կրկին լցվեց բուլշեւիկյան սապոգներով, որոնց ցեխագույն հետքերը նորից ու նորից ամփնա բծեր ձգեցին ծյան ճեղքակալ խալաթի վրա: Կարճիկն ու եռանդուն այդ մարդիկ զարմացան՝ տեսնելով դեռ անցած շաբաթ վախից դողողաբացող, հուսահատ շուրթերով բարեւող վարդապետի հանգիստ ու խաղաղ կեցվածքը: Չէ՞ որ տրոյկայի՝ եռնյակ դատարանի ահասարսուռ ուղղման համար էին եկել իրենք...

Ընկեր Սկոն մորթներկ, սառցակալած լճի մեջ կանգնած, իր փառաշեղ մորուքով շոյում էր լողալի տակից ամհանգիստ դուրս պրծնող ալիքների գանգուրները: Նա այդ պահին նոր, մինչ այդ իր համար չտեսնված մկրտություն էր կատարում: «Ծառայա Աստուծոյ մկրտի յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հօգւոյն Սրբոյ...» մկրտության բանաձեռի մնացած բառերը հանդարտ հանգան նրա արդեն պարզ



րեկ երեկոյան կղզի մտած կարճիկ բուլշեւիկների սապոգների հետքերը էին: Աստված չկա՞... Ի՞նչ... այդ դեպքում ո՞վ է կատարում կամքը նրա, եթե ոչ մաքրության խորհրդանշիչ այս ծյունը... «Հորն եւ կարկուտ, ծին եւ սառն հողմ մրրիկ, որք առնեն զբան նորա...»: Ձբան նորա... իսկ ինքն արդեն ընկեր Սկո է, տուվարիչ

ու զուլալ մտքում, եւ Սկրտիչ Կարապետյանը չեկալի աշխատակիցների ձեռքով սուզվեց ջրի մեջ՝ իբրեւ Եզնիկ վարդապետ, «սպասուար սրբոյ սեղանոյն Աստուծոյ»...

Հիւրն ու կարկուտը, սառը հողմն ու ծյունը պարտաճանաչորեն կատարեցին Տիրոջ խոսքը:

Շահն Ծ. վրդ. ԱՆՆԱՅԱՆ

# Եվ երեսաց Տիրոջ լույսը



Տարիներ առաջ, երբ առաջին անգամ այցելեցի Դիլիջան (Հովք), այնպիսի տպավորություն էր, որ կարծես Աստված էր արարչագործությունն սկսել էր հենց այստեղից:

Գունազարդեղու կարիք չկա, անգնեց աչքով էլ երևում է, եթե նայող աչքը նաեւ տեսնել կարողանա: Մի քիչ շրջելուց հետո նկատեցի մի ցուցանակ, որի վրա գրված էին Գրիգոր Մազախտրոսի

խոսքերը. «Եթե Աստված երբեւէ այցելեր Հայաստան, ես Նրան կտանեի Դիլիջան, որովհետեւ մարդիկ այստեղ մոռանում են մահվան մասին...»:

Հետո սկսեցի այցելել եկեղեցիներ. Ջուխտակ վանք, Հաղարծին, Գլշան վանք:

Այլեւս ետ կանգնել չէի կարող, գորավոր մի ուժ ինձ դեպի այնտեղ էր տանում, եւ ամեն այցելության ժամանակ նորանոր

բացահայտումներ էի անում եւ հիանում այդ չքնաղ բնաշխարհով:

Անցան տարիներ: Բարեկամուհուս հորդորով, ում հիվանդությունը գրեթե դատավճիռ էր, այցելեցի Գոշավանք: Նրան երազ էր ուղղորդել, եւ ժամ առաջ ուզում էինք տեղ հասնել:

Հասանք: Գոշավանքն այցելելուս հիշողություններով մնացել էր: Հավատավորները, քրիստոնյա եւ ոչ քրիստոնյա զբոսաշրջիկները, բոլորը հիացմունքով նայում էին այդ հիմնելի տաճարին, վառում էին իրենց մոմերը եւ հավատքով զորացած՝ դուրս գալիս:

Երբ Աստվածամեկի անունը կրող տաճարում մնացել էի միայն մեկը, մոտեցան Սեդրակ քահանային, ով իր ծառայությունն է մատուցում Գոշավանքում: Հոգեւորականի զգեստը խիստ պատշաճ էր երիտասարդ քահանային, ով, հիւրավար, մեծ հավատ էր ներշնչում:

Հավասար է հրաշքներ ծնում եւ ոչ՝ հակառակը: Մոտեցան եւ խնդրեցին օրհնության կարգ մատու-

ցել եւ աղոթք իղել առ Աստված՝ հիվանդի առողջության համար: Զաջությունս ներեց նաեւ տեղ Սեդրակից նկեր խնդրել հիվանդի համար: Փայտից պատրաստված իրենց տակ-վզնոց քահանան դրեց հիվանդի ափի մեջ եւ ասաց.

- Աստված օգնակալ:

Ամիսներ անց հեռավոր արտասահմանում բուժում ստացող իմ հիվանդությունս պետք է գրեթե «Շնորհակալ եմ .... Գլխավոր շնորհակալությունս պետք է հայտնեմ Բարձրալիկին՝ յուրաքանչյուր բացվող օրվա, ինձ ուժ տալու համար, քանզի այդ ուժով եմ առաջ ընթանում: Շնորհակալ եմ, Տե՛ր, որ ակնաշարյալ եղար իմ աղոթքին: Երախտագիտությունս եմ հայտնում տեղ Սեդրակ քահանային, ով իր աչքը եւ խաջը պահելով իմ գլխավերելուն՝ Տիրոջից խնդրեց ինձ առողջություն, ում նվիրած իրենց տակ-վզնոց կրում եմ մինչ օրս եւ դեռ երկար կկրեմ այն: Եվ եթե Տե՛րը կամենա, առաջին այցելությունս Հայաստան՝ պետք է լինի Գոշավանքը»:

Այո՞, հավատն է հրաշքներ ծնում եւ ոչ՝ հակառակը: Այնուհետեւ հանդիպեցի տեղ Սեդրակին, պատմեցի, որ հիվանդն ապաքինվում է, եւ բժիշկների հույսերը մեծ եւ: Շնորհակալությունս հայտնեցի նրան, ինչին ի պատասխան՝ ասաց.

- Տիրոջ եղեք շնորհակալ:


Գոշավանքի զարմանահրաշագեղությունը շատերն են գգացել: Մտնելով հիմնելի վանքի դռներից ներս՝ այնպիսի խաղաղություն է պարունակում քեզ, որ դուրս գալիս արդեն իսկ դժվար է լինում:

Չորավոր է, որովհետեւ վանքի հիմքն ու շարափնք սերն է, խնդրակատար է, որովհետեւ աղոթքն առ Աստված լսելի է:

Եվ եթե արար շեյխը, ականջը մոտեցնելով Հաղարծնի պատին, ասել է. «Ես լսեցի Աստծո ձայնը», ապա ես Գոշավանքում զգացի Տիրոջ խաղաղությունը:

Փա՛րճ Բե՛զ, Տե՛ր, ուխտավորիս ճամփան բաց պահիր:

Կվարդ ՅԱՎՐՅԱՆ



Սկիզբը՝ թիվ 5-6, 8

Արշիլ Գորկին իր ստեղծագործություններում պահպանել է գեղագիտության ու պատշաճության կանոնները: Սա թերեւս վկայում է այն մասին, որ նկարիչը շատ լուրջ է վերաբերվում իր աշխատանքին: Այն մարդիկ, ովքեր արվեստի ունեցել այցելում էին Գորկու արվեստանոց, պատմում են, որ նա չափազանց մաքուր էր պահում իր աշխատանքային տարածքը: Այդ մարդիկ նաեւ հիշում են, որ ականաժուր արվեստագետը շատ թժախտիկ էր: Նկարչական պարագաներ ընտելի հաղորւմ: Ականատեսները նաեւ հիշում են Գորկու զարմանալի աշխատունակությունը մասին. նա ի վիճակ էր օրերով անդադար աշխատել: Իսկ նկարչները հայկական եղեգի, պոեզիայի ու պարի հանդէպ՝ նրա ստեղծագործություններին առավել մեծ ապկուռ ու հստակություն հաղորդեց:

Գորկու մտահիացումների լուրջությունը հավաստաբանված է ոչ թի լրջությամբ հետ: Լինելով զգայուն հայ ժողովրդի պատմության հանդեպ, որով արարմանը և կործանմանը վերաբերող արատուրը ձեռավորվել էր սերնդեսերունդ, Գորկիի համարադարձակ պատերազմի ու մաքսայումների պատկերներին՝ երեք կարելուր հասկացություններ արտահայտում էր համար: Դրանք էին՝ «մաքություն», «տառապանք» և «հաուսուրթություն»: Մեկ առուուով ասածը կարելի է քնուրդել որպես ստեղծագործական գործնթաիքի քնիհանուր կկարագրությունը և ստեղծագործական գործնթաիքի տառաիքի կկարագրությունը, սակայն մեկ այլ առուուով վերը կշված երեք հասկացուունը:

# ԱՐԵՎԻԼ ԳՈՐԿՈՒ ԱՐՎԵՍՏԻ ԵՆԹԱՏԵՔՍԸ

թիւնները մատնանշում են հայ ժողովրդի պատմությունը: Առաջին հասկացության՝ «մաքրության» ստատիկ պարզությունն ի վերջո հանգեցնում է երկրորդ հասկացությանը՝ «տառապանքին»:

«Տառապանքը ցավիտ բան է, սակայն անհրաժեշտ: Այն աշխուժացնում է մարդկային միտքն ու բանականությունը: Փանկագին Վարթուն, պարզության ներքին անաղարտությունն ունակ է իր մեջ ներառել անսահման խոիեր, զգացմունքներ, կիրք եւ հին հուշերի մի ողջ հիւսնոն: Այս ամենը սիրոված բաներ են, նույնիսկ՝ մեր ազգի արցունքները: Կերը նշվածները կարծես շինակույթն լինեն, որով իր նոր ուղի է կառուցվում: Դրի նոր ուղին դուրս է գալիս հին սահմանաճեղքից: Այդ ճանապարհով անհրաժեշտ է ճանապարհորդել նախնան դրա ստեղծող կարողության գտնել ինքն իրեն» (Լամարվներ 37-38):

Արշիլ Գորկու կյանքի պես հայտնի գաղափարությունն անցել է տանջանքի ճիհասներում: Ենթարկվելով հին հիշողություններին, իստիերի, զգացմունքների և կրքերի ուժգին գրոհին՝ մարդն ստիպված էր հայտնաբերել նոր խորշեր՝ մարդկային հոգում պահպանելու, իսկ այնուհետև դրանցից ազատվելու համար: Չառասխական չէ, որ Գորկու ուշ շրջանի գործերը լի են խորշերով, գաղափարներով, որոնք մեզ տանում են «հայտնիին» սահմաններից դուրս: Դրանք նկարող են նրա կապվելու դիտարկին մղում են դեպի այն առասպելական աշխարհը, որտեղ կակթաթորոնե երեւան է գալիս «հաւանութիւնը»:

Ճանապարհորդություն դեպի հավերժությունը եւ վերացականը կարելու տեղ է գրավում Գորկու ստեղծագործական կյանքում: Արվեստագետը պարադոքսալ հարաբերությունների մեջ էր արդիականության հետ:

Գտնվելով Ամերիկայում՝ Արշիլ Գորկին շարունակում էր հիշել իր հարազատ Վանի ուրվագծերն ու

պատկերները: Վերջիններս նրա համար ստեղծագործական խթան էին: Վասի պատկերները հսկայական կենդանի էակների պես դուրս էին գալիս ջերմ համայնապատկերից: Գորկու

պատկերած կոր գծերը խորհրդանշում են զգացմունքներ, իսկ ուղիղ գծերը կառուցվածքային նշանակություն ունեն (Նամակ 32): Կյո գծերը, ստանալով ազա-  
տություն, կարծես պատմում են  
իրենց պատմությունը: Կյո գծերը  
սխալում են կապիկի վրայով ու ի  
վերջո հասնում մի նրբագեղ կե-  
տի: Շանթերն են իրացել Գորկու  
կապվերի գծերով: Եսել Շվաբա-  
խերն այս առևտյությամբ մի ան-  
գամ գրել է. «Գորկու գծերը ին  
իմաստով են իրնուել կապիկի՝ ի  
տաբերություն մեզմ գեղարվես-  
տական պատկերման, որը հա-  
ճախ գուրկ է շեշտադրումից,  
հաստատունությունից եւ եռա-  
կից: Գորկու արվեստը կարծես  
կոչված է հավերժ ապրելու կե-  
ցության աշխարհում» (տե՛ս  
Schwabacher E., «Further  
Thoughts on Gorky», in Mooradi-  
an's trans., Arshile Gorky: Draw-  
ings to Paintings (exhibition cata-  
log), էջ 89):

Իր նամակներում Գորկին հաճախ է գրում նկարչական գծի կարեւորության մասին իրեն մշակութային կենսունակության կրողի: Իր նամակներից մկում նկարիչը հետեւյալ խորհուրդն է տալիս իր զարմիկ Կառլենին.

«Դու պետք է մոռանաս սուղեր ստեղծելու մասին ևս պիտի փորձես տգծել մի գեղեցիկ, հստակ և սուրբ գիր: Ահա աս է և կկարդալու թուղթ: Ամենակարեւորը գի՜ն է ... Հայ ժողովրդի պատմությունը ցույց է տվել մեզ ստեղծագործական աշխատանքի գաղտնիքը: Փաղտնիքը այն է, որ մարդ պիտի նետի իրեն կյանքի ջրապտույտի մեջ ու ոչ թե՛ հետ քաշվի: Խուսափի վերապահումներից և կարողացի ռիսկի գնալ: Ամենաշատը դու պետք խիստախի՜ն հայտնագործես նորը՝ օգտագործելով քո ողջ ներուժը» (Լամբա՜ն):

Կրկին անգամ ներկայացված

դրվագները վկայում են, թե ինչ-չաք է հայոց պատմության ու մշակույթի՝ Գրկույն Կանաքաւան-թյունն ուղղորդել իր արվեստի տեսությունը եւ գործնականը: Երբ արվեստագետը խոսում է նկարչական գեղեցիկ, հստակ եւ նուրբ գծի կարեւորության մասին՝ հրեւէ փառակցության շար-ժիչ ուժի, հա իրակաւում նկատի ունի իր ավելի եական բան, բան զուտ գեղագիտությունը: Արվես-տագետի վերջին պնդումները հիշեցնում են «Մասուցի Դա-լիթ»՝ Եպոսի պատկերներն ու տրամադրությունները: Գրկինի ու կրկին վերադառնում է դեպի իր կոպիտ: Նրա պատե-րած գծերը դիտողին տանում են հայտնի իրողությունների աշ-խարհից դեպի այն աշխարհը, որտեղ կիրքը եւ պատմելի կա-ռուցվածքը միախառնվում են: Ա-վելի ուշ Գրկինի իր նամակում ի-րեն բնորոշ տոնակցության ու ա-ռաքանության միջոցով տոնա-կանացւում է իր նկարչական ոճի ներքո թաքնված հոգեբանական խթանը:

«Արկեստրատեղը պետք է լինի թերահավակ, բայց չէ ցնիկի: Ուր-բերգույնը չէ հինգից տարբեր բաներ են: Մեր շուրջն առկա են թե՛ հոյսը եւ թե՛ գեղեցկությունը, սակայն մարդկությանը բնութագրելու համար հարկ է պատկերել որոշ դաժան իրողություններ, մարդկային տառապանքներ ու կորուստներ: Այսպիսով մենք հինարավորություն կստանանք զգալ բանականության ու գիտելիքի զարկերակը: Այս նշանակով հինարավոր կրոնաւն եղան բացառապէս մարդկային եղությունը...»

(Նամակ 43):  
Արշիլ Գորկին իր ստեղծագործությունների միջոցով արտահայտում է մարդկային գիտակցության նոր զարկերակը եւ ողբերկության կողմից սահմանագծված ապակույթների արձագանքը:

Արվեստի տեսաբանները երբեմն գնահատում են Գորկու նկարչական ռազմավարության հաջողությունը՝ վկայակոչելով նրա կյանքի ողբերգական ա-

վարդը: Քննադատներինք մեկը՝ Նոռա Ներսիսյանը, «Արշիլ Գորկու պարտությանը» վերնագիրը կրող հոդվածում պնդում է, որ Գորկու կյանքը, նրա ոգին համահունչ էին նրա գեղագիտական պահանջներին, ու որ նա իր ողջ գործունեության ընթացքում փնտրում էր մեկ լուծում, որն առավել համահունչ էլիներ իր առաջադրման կամ համոզմունքներին» (տե՛ս Nercessian N., «The Defeat of Arshile Gorky», *Armenian Review* 36, no. 1 (1983), էջ 97): Այնուհետև քննադատը նշում է, որ Գորկին պահարկում էր հասարակության այն հատվածին, որը հակադրվում էր համընդհանուր առաջընթացի մասին իր արդափայտած պնդումներին: Թե՛ն նկարչի տեսակետները փաստարկված են, սակայն դրանք չափազանց պարզունակ են: Նկարիչն իրապես հավատում էր բանաստեղծության ուժին, եւ այդ հավատը բխում էր այն տպավորություններից եւ ապրումներից, որ նա տեսցել էր իր ազգի պատմությունից: Արժեստատեղծ շարունակաբար իր հավատը գետեղել էր արվեստի մեջ: Այդ հավատը կարծես ներդաշնակություն էր հաղորդում պատմությանը եւ նրա արվեստին: Նկարչի կարծիքով՝ քաոսն

արվեստում տեղ չունի (սամակ 23): Գորկու համոզմամբ՝ անիշխանությունը բխում է ցնիկավիզի: Այս պարագայում կասկածի տակ է դրվում մարդ արարածի գարավարական ունակությունը՝ հաղթահարելու զանազան դժվարություններ՝ սեփական հմտությունների ու ունակությունների միջոցով:

...Մեծ արվեստում շեշտը մշտապես դրվում է գիտակցության ու բանականության վրա (Նամակ 23):

Աղիշի Գորկու ազգային ժառանգությունների հրեից ներկայացուցում է երեքնագրամյա փորձություններով լի պատմություն, որի ընթացքում հայությունը բազմիցս դրսևորեց հարատևելու մեծ կամք: Այն ժամանակ, երբ քաղաք տիրել էր հայոց աշխարհին, հայ ժողովուրդը փրկություն էր գտնում հոգեւոր ու լորտում: այստեղ խոսքն առասպելաբանության, գաղափարախոսության եւ կրոնի մասին է:

Շարունակությունը՝ էջ 6

Այս պատմությունն իմ գիտական ուսումնասիրության տարիների առաջին հրաշքն էր, որից հետո շարունակվեցին մյուսները: 1985 թ. մեկնեցի Մոսկվա՝ սովորելու ապափրանստուրպում: Ընդմիջման ժամ էր: Լաբորատորիայի աշխատակիցներով նստած էիք, մեկ էլ գիտաշխատողներին մեկն ասաց, որ Աննա Իվանովնան է գալիս: Մեղանյի շուրջ բոլոր նստածներն սկսեցին ծծածաղել և միմյանց նայել, կարծես ինչ որ խոսակցություն էին ցանկանում բացել՝ ինչեղու: Աննայի հետ կապված ղեկավար, սակայն լռեցին: Նստածներինց մեկը հանկարծ ինչեց, որ Աննան արդեն 6-րդ ազգամ է գալիս Մոսկվա՝ գիտական թեճզ պաշտպանելու, սակայն երբեք՝ Խախողող տարիներին ես, չէր հաջողվել գիտական աստիճան ստանալ, և ձեռնու՝նայն է վերադարձել տուն: Երբ ընդմիջումն ավարտվեց, իմ ղեկավարից տեղեկացա, որ Աննան հարեանն հանրապետու՝նությունը է գալիս, տարբոջ ու կնի է, երկար տարիներ է աշխատում գիտական նույն թեմայի վրա և ցանկանում է անապաման գիտական աստիճան ստանալ, որ գերեզմանի ճարին գրվի «կենսաբանական գիտությունների բժշկություն»: Հաջողող օրն իմ ղեկավարող ղիմեց ինձ՝ ասելու, որ պետք է գնա՝ Դանիելյան մեմաստուն է Սուրբ տուր Իտեմն ամառեցե: Դ-

# Օրհնական քոնիւն

չինչ չէի հասկանում եւ ոչ ոք չէր բացատրում, թե ինչու պետք է այդ ջուրը բերեմ, իսկ եւս, քրիստոնյա լինելով, չգիտեի, թե ինչ հասկանում ինչ ասել է Սուրբ ջուրը: Դե, տվեալական շրջան էր, արդէված ինչ քրիստոնեական ջուրը սովորողսեղեր, հապկա-ցույթոյններով: Մենաստանից բերված Սուրբ ջուրը պետք է ցանել դաշինիմում, որտեղ Ամնայի թեգի պաշտպանւթյունը պետք է տեղի ունենա: Իմս գաղաշցցել էի, որ հորվազոր է ջուրը հաղկալան-ցանել այն բարձրաստիման գիտնական-եղի նստադրաններին, որոնք միշտ դեմ են եղել այս տիկնոյ աշխատանքին, անգամ միպիւրովով: Նման աշխատանքներ կայա-ցելու համար:

Ինչպես ասված էր, կատարեցի այդ գործը և խոսեցի դառի՜իքի մյլ անկույտում, որ տեսնեմ, թե ի՜նչ է կատարվելու շուրջ ցանկացուց հետո: Դառի՜իճը լցվեց գիտաշխատողներով, դոկտորներով և պրոֆեսորներով, միայն դատարկ մնացին նյարդախոտերը: Զևնախան հանձնաժողովի կախազաղիք ըստ որսիս, ժպտավորվեց իմենք Անային՝ ներկայացնելու աշխատանքը, այն դեպքում, երբ կախազաղիք նույնպես կարողություն տառիներին քնդոնել էր:

Աննայից՝ ասելով, թե էլի եկա՞մ,  
չէ՞ որ այդ թեման այլեւս չպետք է  
քննարկվեր այդ ինստիտուտում:

Անձան ժպտաղետն ներկայացրեց աշխատանքը: Արդյունքներն ոչ մի ընդդիմախոս չգտնվեց. այն նստարանները, որ դատարկ էին մնացել, ամենահիմուկու ընդդիմախոսներն տեղերն էին, որ այդ օրը բացակայում էին, իսկ բոլոր յուրս գիտաշխատողները մնացել էին զարմանքով. որ Աննային ոչ որդեմ չէր, եւ հանձնաժողովը հաստատեց, որ Աննան արժան է գիտական աստիճան տառայվան: Եւ լուր ասպառում էր, թե թե՛մ կոշիկ կամ վիճաբանության պետք է սկսվեց, սակայն ամեն ինչ բարեխաղաշ վարար ունեցան: Ինչ ուղարկաբեցին լաբորատորիա՝ սուրճի սեղան պատրաստելու: Երբ բոլորը նստեցին սեղանի շուրջը, հանկարծ Աննան՝ իրենից գոհ, ցանկացավ խոսել, թե ինչպես այս անգամ ոչ մի ընդդիմախոս չկար, քանի որ այնպես էր պատրաստվել, որ ոչ մի սխալ չգտնվի: Աննայի խոսքը կարեց իմ դեկավարը՝ ասելով, որ աշխարհիկ առաջին քրիստոսյան երկրի ներկայագույնի թե՛ն զգալ մենաստանում:



տան եւ Սուրբ ջուր չլցնէր դահլիճում, նա այսօր էլ չէր կարողանա թե՛րց պաշտպանել, պարզապէս նստածով խաղաղութիւն իջեցրէց բոլորի վրա, եւ ոչ ոք իր բերանը կ'արարացածով բացէ՞ր քննադատելու աշխատանքը։ Բոլորը քարայգէր, կարկանդակ էին, չէին հասկանում, թե ինչ կատարվեց, աղագւմ Աննան, որ հավատով էր եկել, որ այս աղագւմ կ'աղաղիկէր, այնուամենայնիւ չէր հասկանում, թե ինչ է տեղի ունեցել։ Երբ բոլորը հյուրարկարկվելուց հետո լուռ հեռացան, եւ, ղեկավարս եւ նկատեալ երկուրդած քննարկում էին օրվա կատարվածը, ապա հազնեցիկս եւ գաւցիկս Դանիէլոսս մեկատասե՛ր մտ զմտէր։

Լուսիկ ՄԱՐԳԱՐՅԱՆ  
Կենսաբանական գիտ. թեկնածու





Միանգամայն ակնհայտ է, որ 21-րդ դարը լինելու է ճգնաժամային մարդկային գոյության համար ե համապատասխանաբար հագեցված փիլիսոփայական և որ հիմնաստորոգող է բարոյական դիմաբախումներով: Այսօր շատ են խոսում փիլիսոփայության «աստեղային ժամի» մասին, քանի որ եկել են մարդու կողմից սեփական ինքնության, նրա կյանքի իմաստի, աշխարհում իր տեղի ե գարգացման հեռանկարների առավել խոր ըմբռնման գիտակցման ժամանակները: Մարդն սկսում է խորապես գիտակցել բարու ե չարի, հիմնագրության (արտադրի) ե բանականության, կեցության ե ոչ-կեցության, մահվան ե անմահության միջե վճռական ընտրություն կատարելու անհրաժեշտությունը: Համաշխարհային պատմության ժամանակակից շրջանը պահանջում է գիտության ե բարոյականության, ազատության ե պատասխանատվության, մշակույթի ե քաղաքակրթության փոխկապակցվածության հայեցակարգային ևոր ըմբռնում, որը մարդկության կողմից կարող է որվել իր գարգացման գլոբալ ռազմավարության հիմքում՝ ապահովելու ոչ միայն պարզապես գոյատևումը, այլե մարդկային ցեղի իսկական անձնությունը:

Ժամանակակից դարաշրջանի գլխավոր առանձնահատկությունն այն է, որ գլոբալ մասշտաբով ճգնաժամային երեւոյթներն ե մարդու կենսատիկունոգիական ներխուժումը «կյանք»՝ առավել հրատապ ե պահանջարկված են դարձել ավանդական, առերեսույթ «տաղտկալի» ակադեմիական-փիլիսոփայա-

կան հիմնախնդիրները: Մարդկային եության քնույթի, նրա կյանքի իմաստի ե եության, մարդկային արժանապատվության ե Էկզիստենցիալիստական իրավունքի հետ առնչվող հարցերը դառնում են քաղաքակրթության գոյատևման արժանական հարցեր: Ըստ եության, որպեսզի հասկանանք մարդու ե մարդկային քաղաքակրթության պատմական հեռանկարները, դեպի տիեզերք գոյատևման արժանական հնարավորությունները, անհրաժեշտ է իմանալ, թե ինչպիսին է մարդու իսկական բնույթը, նրա բարոյադեզերը ներույթ, գիտելալ, թե մարդը «խորթ» է այդ աշխարհին, թե՛ գոյաբանորեն անսահմանորեն արժանավորված է նրա մեջ:

Փիլիսոփայությունը՝ որպես աշխարհի հոգեւոր յուրացման ուղի, առաջնահերթության իրավունք ունի՝ ժամանակակից աշխարհում տեղի ունեցող հեղափոխական փոփոխությունների իմաստի ե նշանակության գնահատման առումով: Փիլիսոփայությունն աշխարհում մարդու տեղի ե դերի ռազմական գիտակցման բարձրագույն ձևն է: Նա «բաց» է՝ գիտության բոլոր ճյուղերի ե հասարակության ողջ հոգեւոր մշակույթի հետ երկխոսելու համար: Դա արժեքների վերաբերման իրավունք ե ընձեռում փիլիսոփայությանը:

Այստեղից էլ արտակարգ մեծ է փիլիսոփայության պատասխանատվությունը դարաշրջանի իմաստավորման, մտածողության նոր տիպի համարժեք ձևի, քաղաքակրթության ևոր տիպի կամ մոդելի մշակման խնդրում: Դրա խնդրում մեծապես կախված է մեր դարաշրջանի ինտելեկտուալ մեղադրանքի, որը որոշվում է փիլի-

# Քիտեթիկայի աշխարհայացքային առանձնահատկություններ

սոփայական գաղափարներով ե որակ միջե պայքարով, գիտության ե հասարակության փոխհարաբերությունների տիպով, ինչպես նաե ժամանակակից գիտության կիսակոլ ե առարկայական տիրույթով:

Քիտեթիկայի փիլիսոփայական, աշխարհայացքային հիմնախնդիրների առանձնահատկությունն այն է, որ նրանք չունեն որոշմատիկ, անառարկելի բնույթ ե այդ իմաստով՝ չունեն բոլոր ժամանակների համար միանշանակորեն հայտնի լուծումներ: Կոնցրային փիլիսոփայական-Էկզիստենցիալ ե աշխարհայացքային արժանույթն ունեցող քիտեթիկայի՝ որպես մարդկային մշակույթի առանձնահատուկ ուղիղ իմաստը նրա տրամադրական, երկխոսական բնույթի մեջ է: Վերջինս պահանջում է անձի ակտիվ հոգեւոր դիրքորոշում, որի հեռանկետն արդեն տեսանելի է՝ «գիտելիքը ե առաքելությունը անխզելի են» տկրատեսայն կանխարդյոթի մեջ: Սկզբնապես քիտեթիկան կազմավորվել է որպես գիտության եթիկայի բաժին, այսինքն՝ գիտական իմացության սոցիալ-բարոյագիտական ե հումանախտական հիմնախնդիրների ամբողջություն, սակայն որոշ ժամանակ անց, ինտելեկտուալ փիլիսոփայությանը, գիտության գործառնույթի վերածվել է հետազոտությունների ինքնուրույն բնագավառի:

Հետազոտություն փիլիսոփայության ե քիտեթիկայի փոխադարձ կապը՝ ին կարելի չի իշխատել փիլիսոփայության եության, փիլիսոփայական ուսումնասիրությունների աշխարհայացքային նշանակությանն առնչվող հիմնահարցերը:

Փիլիսոփայության գլխավոր առաքելություններից մեկը մարդու, նրա կենսագործունեության վերաբերյալ գիտելիքների համակարգումն է: Այդ տեսակետից

քիտեթիկան հանդես է գալիս որպես մարդու մասին գիտելիքների համակարգման առանձնահատուկ եղանակ ե շարունակելով փիլիսոփայության ե բժշկության ավանդույթները՝ միաժամանակ տարբերվում է դասական մետաֆիզիկայից՝ նրանով, որ այն գործում է քաղաքակրթության համապարփակ ճգնաժամի, կենսաբժշկական ևոր տեսիլնույթի հանդեպ պայմաններում:

Այս ամենը փիլիսոփայությունից պահանջում է հայեցակարգային ե աշխարհայացքային ուղղակիություն, որը բխում է մեր ժամանակների մարտահրավերներից: Աշխարհայացքային ե հայեցակարգային առումներով՝ քիտեթիկան պրակտիկ փիլիսոփայության ևոր եղանակ է, իսկ կենսաբժշկական տեսիլնույթի ներսի ագրեսիվ ներխուժման պայմաններում՝ կյանքի ե մարդկային արժանապատվության ևոր փիլիսոփայություն:

Քիտեթիկան գիտելիքների համակարգման առանձնահատուկ եղանակ է, ինչպես նաե եթիկական-իրավական տարածքում մարդկային կենսագործունեության առանձնահատուկ եղանակ, որի միջոցով բժշկության կողմից յուրացվում են հեղափոխական կենսատեսիլնույթի հանդեպ:

Մասնագիտական գրականության մեջ քիտեթիկայի մեկնաբանության հարցերում նկատվում է երկու միտում: Մի կողմից գոյություն ունի տվյալ հասկացության ծավալի ներառման միտում, մյուս կողմից՝ քիտեթիկան հանկեցվում է ներ ըմբռնված մասնագիտական բժշկական եթիկային:

Իսկ ընդլայնողական մեկնաբանության տրամաբանությամբ՝ քիտեթիկան ըմբռնվում է ոչ թե պարզապես որպես կյանքի եթիկա, որն ընկած է բժշկական եթիկայի հիմքում, այլ որպես կյանքի պրակտիկ փիլիսոփայություն:

Քիտեթիկան ընավ չի հավակնում լինել ապագայի յուրօրինակ կրոն, ինչպես որ ժամանակին եկզենիկան, սակայն նույնիսկ եթե այդպիսին դառնա, կտարբերվի ավանդական կրոններից նրանով, որ կզբաղվի ոչ թե հոգու փրկությամբ, ինչը կրոնի նպատակն է, այլ կյանքի՝ փրկությամբ ե պաշտպանությամբ: Քիտեթիկայի նպատակը կյանքի ապաքինում-բժշկումն է ե պահպանումը, նրա ոգու վճենագումը:

Փիլիսոփայության աշխարհայացքային իմաստը ե քիտեթիկայի գերխնդիրը սկզբունքորեն համընկնում են: Եթիկան միշտ դիտարկվել է որպես պրակտիկ փիլիսոփայություն, որպես մարդու գործունեության բարոյական գնահատման չափանիշ, բարոյական ընտրության հիմնավորում:

Ժամանակակից պայմաններում պրակտիկ փիլիսոփայությունը հզոր ազդակ է տեսել նոր ձեւով, այսինքն՝ քիտեթիկայի տեսքով զարգանալու համար: Քիտեթիկան ոչ միայն գիտական գիտելիքների որոշակի համակարգ կամ կազմավորվող սոցիալական ինստիտուտ է, այլե մշակույթի ևոր տարր, ևոր աշխարհայացք: Եթե անտեսվում են քիտեթիկայի արժեքային-աշխարհայացքային բաղադրիչները, որոնք կոչված են բացահայտելու բժշկական գործունեության բարոյական իմաստը կենսատեսիլնույթական հեղափոխության պայմաններում, ապա դա կարող է հանգեցնել բժշկության, կենսաբանության, կենսաֆիզիկայի ե կենսաքիմիայի ընդհանուր աշխարհայացքային հիմքերի կազմալուծմանը: Ամբողջությամբ վերցրած՝ քիտեթիկայի արժեքային-աշխարհայացքային բաղադրիչը ժամանակակից քաղաքակրթության կենսաբժշկական, էկոլոգիական մշակույթի կարեւոր չափանիշներից է:

Շարունակությունը՝ էջ 7

# ԱՐՇԻԼ ԳՈՐԿՅՈՒ ԱՐՎԵՍՏԻ ԵՆԹԱՏԵՐԱՏՐ

Սկզբը՝ էջ 5

1948 թ. հունվարին նկարիչը գրում է իր վերջին նամակը, որը հասցեագրված էր քրոջը ե վերջինիս ամուսնուն: Ահա թե ինչ է Նա գրում այդ նամակում. «Տեխնիկան պիտի համարվի գեղագիտական ինտելեկտի հետ, այլապես կյանքը կվերածվի լոկ գոյատևման ոչ թե բեղմնավոր փորձության» (տե՛ս Mooradian K., The Many Worlds of Arshile Gorky (Chicago, Gilgamesh Press, 1980), էջ 313): Գորկուն այն ուժգին համոզմունքը, ըստ որի՝ գիտակցականը մեծ ուժ ե դեր ունի, նրան միավորում է դարաշրջանի կարկառուն հոգեվերլուծաբանների հետ: Այս գիտականները շարունակաբար պնդում էին, որ թեե անգիտակցականը շատ հարուստ է մտապատկերներով, սակայն մարդկային գարգացումը պայմանավորված չէ բացառապես դրանով: Գիտակցության կարեւորության մասին ամփոփ միտք է արտահայտել Կառլ Յունգի ուսանողուհի Ամիելա Տաֆեն. «Գիտակցությունն առանձին վերցրած ի գրում է որոշելու պատկերների նշանակությունը ու ըմբռնելու դրանց դերը մարդու համար: ... Միայն գիտակցականի ու անգիտակցականի փոխազդեցության միջոցով կարելի է պարզել անգիտակցականի նշանակությունը» (տե՛ս Jaffe A., «Symbolism in the Visual Arts», էջ 297):

Գորկին երբեւէ չի անտեսել այդ փոխազդեցությունը: Լինելով մի արվեստագետ, որն ստեղծել է հիբրիդներով ու հակադրու-

թյուններով հարուստ արվեստ, լուսին գիտակցում էր իր կյանքի ողջ ցավը, ե ու ինչն օտարված էր հասարակությունից: Ակարին իր քրոջը հասցեագրված նամակն ավարտում է դառը տոնակությամբ: Նա գրում է, որ ինքը մինչե վերջ մնաց խոցելի իր նախկին կորուստների պատճառով: Կյանքի դրամատիկ կողմերի գիտակցումն արվեստագետին հասցրեց իր ուժերի եղ-րագծին: Գորկու վերջին գործերը, օրինակ՝ «Եզրագիծ» կտավը (1947), տեղակայված են այն սահմանային տիրույթում, որտեղ «հայտնին» ու «անհայտը» առճակատվում են մեկ մյուսին: Իսկ Գորկու «Վերջին կտավ» (1948) անունը կրող նկարում երեան են գալիս անգիտակցականի ել ավելն արարափելի պատկերներ, որոնց նպատակը քնից զարթոնող աշխարհին ճնշելն է:


Գոյություն ունեւր մի բան, ինչից արվեստագետը վախենում էր ավելի շատ, քան մահից. դա ֆիզիկական ե հուզական քառույթ կամ քննքն է: Գորկին իրապես չէր վախենում մահվանից: Նա այն մարդկանցից էր, ովքեր ունակ են հեռանալու այս աշխարհից՝ չկորցնելով արժանապատվության զգացումը: Ինքնասպանությանը առաջ Արշիլ Գորկին գրել է իր ընկերոջը՝ Սաուլ Շարին. «Ի՞նչ կյանքն ավարտված է: Ես այնչեւ չեմ ցանկանում շարունակել իմ գոյությունը» (տե՛ս Mooradian, The Many Worlds of Arshile Gorky, էջ 207):

Ի վերջո, մեր առաջ երեան է գալիս այն նույն պարագայը, որով սկիզբ առավ տոյն

հողվածը. Արշիլ Գորկու բուռն ցանկությունը՝ ուրվագծելու իր արվեստի ծագումնաբանությունը, հավասարակշռված է նրա ավանդադիտական ծագումների հետ: Այս հակադրությունն ստանում է իր գործնական լուծումը, երբ անեւ անգամ Գորկին ազգային արվեստի կատարյալ տիրապետման շնորհիվ առաջարկում է լուծումներ՝ առաջացող տեխնիկական խնդիրների համար (տե՛ս Rand H., Arshile Gorky: The Implication of Symbols (Montclair, N. J.: Allanheid , Osmun and Co., 1980 ), էջ 135):

Արվեստի տարագրության մեջ՝ Արշիլ Գորկին կատարեց իր մոր ցանկությունը, այն է՝ շարունակել իր արվեստագետ նախնիների սկսած գործը: Գորկին ջանք չխնայեց, որ ամերիկյան մշակույթում առաջնան ևոր ծիլեր, որոնք հետագայում պիտի տային այնպիսի պատկերներ, որոնց նմանը երբեւէ ոչ մի տեղ չէր եղել: Զմարտության առաջ չենալեցին համար ստեյն, որ Գորկին ընավ միակ արվեստագետը չէր, ով կիրառեց «գարկունի նշաններ», սակայն նա առաջինն էր, ով օգտագործեց նորարարական լուծումներ ե վայելույ միջոցներ՝ անձնական անհրաժեշտության ու հանրային հասանելիության հաշտեցումը երաշխավորելու համար (տե՛ս Rand H., Նշվ. աշխ., էջ 217):

Արշիլ Գորկու արվեստը կարծես խորհրդանշան է եպիկական հերոս Փոքր Մեերի



ազատումը Վանի հարթավայրում գտնվող ժայռից: Ծակատագրի հեղեանքով Արշիլ Գորկին այդ ազատականացման գաղափարը լավագույնս արտահայտեց օտար հողում՝ Ամերիայում, որն իրենից ներկայացնում էր հակադրությունների ու հակաությունների մի երկիր: Այդ երկրում պարտա իող էր նախապատրաստված համարումներ ե ընդիմադրություններ կատարելու համար: Չարագնեղվով հայկական մշակութային ժառանգությունը՝ Գորկին միեւնույն ժամանակ կարողանում է խուսափել ժստողականությունից: Իր անցյալի խորհրդանշաններից հրաժարվելու փոխարեն նա այնչեւ ժամանակ էր զբաղվում փորձարարությամբ, միկելե որ այդ խորհրդանշանների փոխակերպված ձեւերն արտահայտեւ մի այն աքսիոմ: Ըստ վերջինիս՝ «մարդ արարածի ակունքները հարկ ե փնտրել դրախտում»:

Տիգրան ՄԱՆՈՒՄՅԱՆ  
Բանասիրական գիտ. թեկնածու



Սկզբը՝ թիվ 4, 6

♦♦♦

Աշխարհին բարի կամեցող, աշխարհում բարին արարող և բարու հավերժական պատուհերով ցնծացող բանաստեղծը, ճիշտ է, ուզում է հեռանալ այս ապիկար աշխարհից, անգետ ու անմիտ մարդկանցից, բայց, այնուամենայնիվ, հազար կայերով կապված է մեծ ու այս աշխարհին, անհունորեն փարվում այս կյանքին, տրվում նրան ու ապրում նրանով: Նա ուզում է, որ լույսը հաղթանակի, բարին խափանի չարին: Բարություն սերմանողը բարու ճանապարհն է ցույց տալիս կյանքին, աշխարհին, մարդուն: Եվ մեր առջեւ բացվում են բանաստեղծի հոգու զարդանարանները, այնտեղից մեզ երևում ու ժպտում է աշխարհի ցավերով ապրող, տառապող, հոգեւոր հզոր կարողության ու տարողության մեծ մարդասեր տաղերգուի սիրտը, որն իր եւ գալիք ժամանակներին պատգամում է.

*Ով քեզ չար կամենայ,  
այստ է բարի հաստցանել.  
Ով փուշ է ի քո դիմաց,  
դու յիր միջին լեր վարդ վառել.  
Դու ջանք դիր գատելիս  
եւ զթընամիսը քո սիրել,  
թե չէ՝ այն փոխարեն է  
սիրդու սեր հատցանել:*

Սա արդեն բարձրագույն մարդկային ապրում է, անհունորեն կյանքին փարված բանաստեղծի սրտի տրոփ, զարկն է տիեզերական առաքելության եւ մշտական բարության...

Սա կյանքի խոսք է եւ հավերժության փիլիսոփայություն: Անշուշտ, կլինեն ան-

ձինք, որոնք դա կկապեն Երզնկացու հոգեւորական լինելու հետ, այսինքն՝ գալիս է քրիստոնեական զարգացման փուլում, բայց, թող ներքի համարձակություն, եւ միանգամայն կասեմ՝ ո՛չ: Դեռ մինչեւ քրիստոնեությունն էլ բարության զարգացման, փիլիսոփայությունը թեւածել են այս աշխարհում: Եթե բացենք Հին Արեւելքի փիլիսոփայական մատյանները, ապա կտեսնենք, որ Կոստանդին Երզնկացուց շուրջ 20 դար առաջ ապրած կիսաառասպելական ճգնաժամ, ծեր չի Լաո Տգին իր փիլիսոփայական, դասական մատյանում գրում էր. «Ես բարուն բարություն եմ անում, անբարին նույնպես բարություն եմ անում: Այդ ձեռով դաստիարակվում է բարությունը» (տե՛ս «Հին Արեւելքի պոեզիա», էջ 421):

Եվ մի՞թե այդ զգացումներով չէր հանձնարել լուծեցին, եւ նրա հոգեւոր խառնաբանից դուրս չէր եկել նույն բարության մտածումը, երբ գրում էր.

*Ինչքան ծավալում եմ տեսել ես,  
Նեղոս ու դավ եմ տեսել ես,  
Տարբեր, ներքե ու սիրելի-  
Վատը՝ լավ եմ տեսել ես:*  
Հովի. Թումանյան, Զառյաններ, Եր., 1969, էջ 21

Բարու փիլիսոփայությամբ Կոստանդին այդ կարգի մեծությունն էր՝ մեծատառ Մարդ:

Կոստանդին Երզնկացին միջնադարյան մոայլ ու խորշակ գիշերներում ապրում էր նաեւ եղբայրական երկվորյակ. հոգու եւ մարմնի դրամա:

Մարդու ներքին աշխարհի տերն ու տնօրենը հույզերն են, եւ նրանցից կենտրոնականը՝ սերը՝ իր հոգեւոր եւ մարմնական պահանջներով, ու ինչպես մարդն է մարմնեղեն ու հոգեղեն կերտվածք, այնպես էլ՝ կյանքը հաստատող, իմաստավորող նրա սերը:

Յուրաքանչյուր ճշմարիտ բանաստեղծ իր սիրո, իր բազմաբնույթ ապրումների մասին՝ նույնիսկ հակասական, ինքն իր հետ խոսում է բարձրաձայն, ինչպես կասեմ Բ. Շոուն, եւ նրան ամբողջ աշխարհն է լսում: Նա խոսում է աշխարհի ու դարերի հետ եւ խոսում է մարդու անուկից: Եվ այդ ընթացքում հաճախ բախվում է փակ դռների, կանգնում անլուծելի խնդիրների առ-

ջեւ, ինքն իրեն հակասում ու հաստատում: Հակասական են հոգու եւ մարմնի պահանջները...

Երզնկացին ունի տիեզերամեծ, հզոր ու այնքան տարողունակ ներաշխարհ, ուր տեղավորվում են տիեզերքի հավերժական երեւույթները եւ մարդկային բազում ապրումները, որոնք գուցե ինքը չի էլ ապրել, բայց խորթ չեն նրա մարդկային հոգուն: Սա խոսում է ուրիշի ցավը, ապրումը իրենց զգացող հոգու մասին: Այստեղ, թերեւս, տեղին է հիշել հանձնարել Ու. Ուիլմսի այս խոսքերը. «Ես բավականաչափ տեղ ունեմ իմ մեջ հակասություններ տարավորելու համար»:

Ինչպես յուրաքանչյուր մարդ, այնպես էլ մեծ քնարերգու բանաստեղծներն ունեն իրենց հակասական ապրումները՝ միայն այն տարբերությամբ, որ վերջինիս հուզաշխարհի հակասություններն ավելի են ընդգծվում, ավելի համարձակությամբ ու շեշտով նրանք իրենց ապրումներն ի հայտ են դարձնում աշխարհին, խոսում աշխարհի հետ, եւ նրանց մեծությունն էլ պայմանավորված է նրանով, որ բարձրաձայն լինելով իրենց իսկ ներաշխարհից՝ ժամանակի, դարերի հետ խոսում են մարդու անունից, որը զգացմունքների ու երազանքների, կարոտի ու սիրո, ուրախության ու տառապանքի մասին...

Իր հուզաշխարհի հակասությունները (հոգու եւ մարմնի) իր իսկ տաղերում մի այսպիսի ազնիվ ու համարձակ շեշտով ընդգծում, թողնել է հանձնում միջնադարի մեր այս մեծ քնարերգուն՝ Կոստանդին Երզնկացին:

♦♦♦

*Ու կծանարան մտքավորող հոգուն,  
Իրենը կանի...*

Ինչպես գրականագետ Հրանտ Թամրազյանն է որպես, Երզնկացու պոեզիան ընդգծում, թողնել է հանձնում միջնադարի մեր այս մեծ քնարերգուն՝ Կոստանդին Երզնկացին:

Եվ ինչպես էլ. մենք բանաստեղծի տաղերում տեսնում ենք, թե ինչպես է բնությունը, բոլոր տեսանելի եւ չոչափելի գեղեցկություններով, զարնան լույսով, առեւտում ու շեքմությամբ ապրումված, իր անխնայական ուժով թափանցել տաղերգուի երգչության մեջ, թե ինչպիսի անկրկնելի գագուղությամբ ու վարպետությամբ է նա ապ-

րում եւ փառաբանում, զովերգում լույսը, արեւը, առավոտը, գիշերն ու ուրախությունը, կինը եւ մեծ Սերը...

Գարունն ինքը կյանքն է, եւ այդ գարունն է Երզում Կոստանդինը՝ տալով բնության ու մարդու հոգեւոր զարթոնքի հիսաբանչ ու անկրկնելի պատկերներ, որոնք իրենց հնչունությամբ, թափով ու շնչով, սրբություններով, զանազան ու զարմանազան գույներով, զգիլից բուրմունքով գերազանցում են մեկը մյուսին: Բայց ամենազեղեցիկը զարնանային առավոտն է: Առավոտը իմաստության եւ անթույլության խորհրդանշն է, որը շատերին ցանկալի, բայց քչերին է հասանելի, առավոտը ե՛լ լույսի ծնունդ է, եւ լույս...

Եվ մի՞թե հենց այդ լույսը չէ, ինչպես Վարդանան է ասում, որ «ազվոր է, բարձրության մեջ՝ հոսանուտ, խոնարհում մին մեջ՝ արդար».

*Լույսն է Մրցողի հարսը, աղջիկն՝ Աստծո,  
Ան գիկին է Տեղեղերի բերրության,  
...Չոր գիշերվան մեջ խորին  
Բանաստեղծները կը խմեն աստղերեն՝  
Որ նվագեն ցերեկվա մեջ՝ Մարդերն...  
Եվ դեպի որը գնում էր անմահ Վարդանան ինքը.*

*Ու եւ չէրթա՞մ դեպի արդյուրը լույսին...  
Եվ մի՞թե սա այն լույսն, երազ երկիրը  
չէ, ուր, ըստ Տերյանի, «Ողջ կյանքը հրաշք է դառնում...», եւ արթում նրա անուշ անու-*

*նով»:*  
Եվ, փնտնելով ժամանակ, սա մի՞թե այն լույսն է, իմաստության պարունակող այն հավերժական մեղեդին,

*Որ հնչել է աստվածների ծննդի հետ.  
...Լույսն, լույս գվարթ,  
Լույս գվարթ ու գերազանցիկ...  
Սա Լաւե՛*  
*Լույս գվարթ արդար գոյի՝  
Շարադանքն առավոտի...  
Պ. Սեւակ*

Շարադանքն առավոտի...  
Պ. Սեւակ

Շարադանքն առավոտի...  
Պ. Սեւակ

## Քիտեթիկայի աշխարհայացքային ...

Սկզբը՝ էջ 6

Հարկ է նկատել, որ մարդու վերաբերյալ փիլիսոփայական նոր հայեցակարգը հեռանկարում կարող է դառնալ քիտեթիկայի միջնադարյանական հիմնախնդիրների համալիր լուծման տեսական կարելու արդյունք: Այդ իսկ պատճառով այն՝ քիտեթիկան, էապես կախված է գիտափիլիսոփայական աշխարհայացքից, նրա ճանաչողական եւ արժեքային հիմքերից:

Այսպիսով՝ ըմբռնման հաստատման ճանապարհին կան իմացաբանական խոչընդոտներ, որոնցից է տեխնոկրատիզմը: Գիտական շրջանակներում տեխնոկրատական մտածողության տիրապետությունը կյանքի է կոչում սցենարիստական պատկերացումներ՝ մարդու մասնալուծման, նրա վրա ձեռնաձեռնական ներգործությունների անսահման հնարավորությունների մասին՝ սոցիալական պայմանների կամ քաղաքական բնույթի փոփոխման միջոցով:

Գիտության պատմության փորձը ցույց է տալիս, որ սցենարիստական կողմնորոշված սահմանափակ աշխարհայացքն անխուսափելիորեն կյանքի է կոչում իսկական գիտական փիլիսոփայական մտածողության անհա-

րիր պատկերացումներ՝ «Եվզեթիկա՞ն ուրվականների», «գերմարդկային»՝ նախապես տրված հատկանիշներով մարդ ստեղծելու զարգացման տեսքով: Զարգացման ընթացքում զարգացման ժամանակակից կենսատեխնոլոգիական փուլն առաջադրում է գիտական լուրջ հիմնախնդիրներ, որոնք ունեն կարեւորագույն մեթոդաբանական եւ արժեքային-աշխարհայացքային նշանակություն: Քիտեթիկայի կենսամասնային հիմնախնդիրները չեն կարող ծագել սպեկուլյատիվ փիլիսոփայության կամ սցենարիստիկ ընդերքում: Նրանք, սովորաբար, հարուցվում են ժամանակակից բնագիտության՝ կենսաբանության, գենային ինժեներային, կենսաբժշկության «ճնշման» շնորհիվ: Դա ժամանակակից փիլիսոփայությանը, մարդկային բանականությանը նետված յուրօրինակ «մարտահրավեր» է, առավել էս՝ որ աշխարհայացքային հարցերը հնարավոր չէ լուծել մասնավոր գիտական գիտելիքների, առանձին կրոնների կամ բժշկության շրջանակներում:

Քիտեթիկայի զարգացման կարևորագույն ուղղությունը կապված է ժամանակակից քաղաքակրթության գլոբալ խնդրի՝ հասարակական զարգացման նոր



հարացույցի, քիտեթիկական մտածողության նոր տիպի ստեղծման հետ, որը կփոխի պատկերացումները՝ իրականության եւ փիլիսոփայական իմաստության միջեւ կամուրջներ գցելով, կկարողանա արեւմտյան պրագմատիզմը հաշտեցնել բարձրագույն հոգեւոր արժեքների, փիլիսոփայությանը՝ կյանքի հետ:

Այսպիսով՝ կյանքի մեծագույն հրաշքի ճանաչումը, կյանքի տիեզերական մասշտաբի եւ նրա համար պատասխանատվության ի-

մաստավորումը, կյանքի ընդհանուր ռազմավարության մեջ խառնուրդ լինելը խորհրդանշող մարդկային անհատից պահանջում են փիլիսոփայի ինտելեկտուալ հանձնառություն՝ ոչ միայն կյանքի պաշտպանության սոցիալական նոր ձեւերի որոնումներով: Դա հանգում է առանձնապես կյանքի հանդեպ արտահույզ երկուրդաժության, ակնածության վերաբերմունք (Ա. Շվեյցեր), ինչն իր առավել համարժեք արտահայտությունը գտնում է քիտեթիկայի աշ-

խարհայացքային բովանդակության մեջ:

Քիտեթիկայի փիլիսոփայական վերլուծությունն ունի սոցիալ-թեթիկական եւ իրավաբանական կարելու նշանակություն՝ գիտության թեթիկայի հիմնախնդիրների վերլուծության համար, եւ պահանջում է կանոնավոր կերպով անցկացնել քիտեթիկական մշտադիտարկում (մոնիտորինգ): Այն թույլ կտա բացահայտել ինչպես գիտական հանրության, այնպես էլ սոցիումի համար ընդունելի թեթիկական նորմերը կենսաբժշկական այնպիսի մասնալուծման հետ իրականացնելու, ինչպիսին է միջամտությունը մարդու գենոմի մեջ, եւ այդ հիմք վրա մշակել կենսաբժշկական օրենսգրքեր՝ իրավաբանական նորմատիվների տեսքով:

Քիտեթիկայի սոցիալ-թեթիկական, փիլիսոփայական-աշխարհայացքային հիմնախնդիրների հետագա մշակումը դառնում է ոչ միայն տեսականորեն իրատեսալի, այլեւ գործնականորեն խիստ կարեւոր եւ նշանակալի՝ մարդու մասին ժամանակակից գիտությունների զարգացման համար: Այստեղ մենք, նախքան քիտեթիկայի կոնկրետ հիմնախնդիրների վերլուծությանն անցնելը, նպատակահարմար ենք գտնում հստակեցնել քիտեթիկայի արժեքաբանական հիմքերը:

Սուսաննա ԴԱԹՅԱՆ  
Փիլիսոփայական գիտ.  
դոկտոր, պրոֆեսոր

